

Կոռուպցիայի ընկալման 2017 թվականի համաթիվը ցույց է տալիս կոռուպցիայի ծանր բեռնան առկայությունն աշխարհի երկրների ավելի քան երկու երրորդում

Թրանսպարենսի Ինթերնեշնլի կողմից իրականացված արդյունքների վերլուծությունից երևում է, որ հասարակական կազմակերպությունների և լրատվամիջոցների սկատմամբ ճնշումները կապված են կոռուպցիայի բարձր մակարդակի հետ

Բեռլին, փետրվարի 21, 2018 – Այս տարի իր հիմնադրման 25-ամյակը նշող Թրանսպարենսի Ինթերնեշնլի կողմից այսօր հրապարակված Կոռուպցիայի ընկալման համաթիվերը վեր են հանում որոշ մտահոգիչ տվյալներ. չնայած ողջ աշխարհում կոռուպցիայի դեմ տարվող պայքարին, երկրների մեծամասնությունը չափազանց դանդաղ է գործում այդ պայքարում: Ճիշտ է, որ կոռուպցիայի դեմն առնելը ժամանակ է պահանջում, սակայն դա չի արդարացնում շատ երկրներին, որոնք վերջին տարիներին շատ քիչ են առաջադիմել կամ ընդհանրապես չեն առաջադիմել: Էլ ավելի մտահոգիչ է այն, որ համաթիվի արդյունքների հետագա վերլուծությունը ցույց է տալիս, որ այն երկրները, որոնցում հասարակական կազմակերպությունները և լրատվամիջոցներն առավել քիչ են պաշտպանված, նաև ունեն կոռուպցիայի առավել բարձր մակարդակ:

Արդյունքներին ծանոթանալու համար խնդրում ենք այցելել www.transparency.org/cpi2017

2017թ. կոռուպցիայի ընկալման համաթիվը (ԿԸՅ) դասակարգել է 180 երկրներ և տարածքներ ըստ այն բանի, թե փորձագետները և գործարարները որքանով կոռումպացված են ընկալում այդ երկրների հանրային ոլորտը (պետական և համայնքային մարմինները): ԿԸՅ-ն չափվում է 0-ից 100 սանդղակով, որտեղ 0-ն նշանակում է, որ այդ ոլորտն ընկալվում է բացարձակ կոռումպացված, իսկ 100-ը՝ բացարձակ մաքուր: 2017թ. համաթիվերը ցույց են տալիս, որ աշխարհի երկրների ավելի քան երկու երրորդի ԿԸՅ արժեքները 50-ից փոքր են, իսկ ԿԸՅ միջին արժեքը հավասար է 43-ի:

Վերջին վեց տարիների ընթացքում մի շարք երկրների ԿԸ համաթվերն էապես բարելավել են: Այդ երկրներից են Կոտ դ'Իվուարը, Սենեգալը և Մեծ Բրիտանիան: Միևնույն ժամանակ, մի շարք երկրներում գրանցվել է լուրջ հետընթաց. դրանցից են Սիրիան, Յեմենը և Ավստրալիան:

2017թ. ԿԸՀ ամենաբարձր արժեքներ գրանցել են Նոր Չելանդիան և Դանիան՝ համապատասխանաբար 89 և 88 միավոր: Ամենից ցածր արժեքներ գրանցել են Սիրիան, Չարավային Սուդանը և Սոմալին՝ համապատասխանաբար 14, 12 և 9: Տարածաշրջանների կտրվածքով ամենից լավ արդյունքները ցույց է տվել Արևմտյան Եվրոպան, որի ԿԸՀ միջին արժեքը հավասար է 66-ի: Ամենավատ արդյունքներ գրանցել են Անդրսահարյան Աֆրիկան (ԿԸՀ միջին արժեքը՝ 32) և Արևելյան Եվրոպան և Կենտրոնական Ասիան (ԿԸՀ միջին արժեքը՝ 34):

Ամեն շաբաթ մեկ լրագրող է սպանվում շատ կոռումպացված երկրում

Թրանսփարենսի Ինթերնեշնլի կողմից իրականացված ԿԸՀ ավելի հանգամանալից վերլուծությունը վեր է հանել կապը, մի կողմից, կոռուպցիայի մակարդակի և, մյուս կողմից, լրագրողների ազատությունների պաշտպանվածության և քաղաքացիական հասարակության՝ իրենց երկրների հասարակական կյանքում ներգրավվածության միջև: Վերլուծությունից պարզվել է, որ, սկսած 2012 թվականից, համարյա բոլոր լրագրողները սպանվել են կոռումպացված երկրներում: «Կոռուպցիայի մասին խոսելիս ոչ մի ակտիվիստ կամ լրագրող չպետք է վախենա իր կյանքի համար», - ասում է Թրանսփարենսի Ինթերնեշնլի գործադիր տնօրեն տիկին Պատրիսիա Մորեյրան: «Նկատի ունենալով ողջ աշխարհում քաղաքացիական հասարակության և լրատվամիջոցների նկատմամբ իրականացվող ճնշումները՝ մենք պետք է անենք ավելին՝ պաշտպանելու համար նրանց, ովքեր իրենց ձայնն են բարձրացնում ընդդեմ կոռուպցիայի», - ավելացնում է նա:

Վերլուծությունը, որն օգտագործում է [Լրագրողների պաշտպանության կոմիտեի](#) տվյալները, ցույց է տալիս, որ վերջին վեց տարիներին յուրաքանչյուր 10

սպանված լրագրողից 9-ը գործել է այն երկրում, որի ԿԸՀ արժեքը եղել է 45-ից ցածր: Սա նշանակում է, որ շատ կոռումպացված երկրներում միջին հաշվով շաբաթական առնվազն մեկ լրագրող է սպանվում: Բացի այդ, յուրաքանչյուր հինգերորդ լրագրող սպանվում է կոռուպցիայի մասին գրելու պատճառով: Դժբախտաբար, այս դեպքերից մեծամասնությունում արդարադատությունը երբեք չի գործել:

Թրանսփարենսի Ինթերնեշնլի ջանքերը և նրա անմիջական փորձը, որը գալիս է իր՝ աշխարհի ավելի քան 100 պաշտոնական ներկայացուցիչների հետ աշխատելուց, հաստատում է կոռուպցիայի և մամուլի ազատության սահմանափակման միջև սերտ կապը: Օրինակ՝ Բրազիլիայում, որի 2017թ. ԿԸՅ արժեքը հավասար էր 37-ի, վերջին վեց տարիներին սպանվել է 20 լրագրող: Իրենց հետաքննություններում թիրախավորելով տեղական ինքնակառավարման մարմիններում տեղ գտած կոռուպցիան և թմրանյութերի հետ կապված հանցագործությունները՝ բրազիլացի լրագրողներն ամեն օր վտանգում են իրենց կյանքը՝ ուղղակի իրենց գործն անելով:

Կոռուպցիան կապված է քաղաքացիական հասարակության գործունեությունը սահմանափակելու հետ

Թրանսփարենսի Ինթերնեշնլն ուսումնասիրել է նաև կապը կոռուպցիայի մակարդակի և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների՝ գործելու ազատության և հանրային քաղաքականությունների վրա ազդելու միջև: Վերլուծությունը, որն օգտագործում է [Համաշխարհային արդարադատության ծրագրի](#) (World Justice Project) տվյալները, ցույց է տալիս, որ քաղաքացիական ազատությունների ցածր մակարդակ ունեցող երկրների մեծ մասը ունի ԿԸՅ ցածր արժեքներ:

«Վարկաբեկումը, սպառնալիքները, դատական գործերն ու բյուրոկրատական արգելքներն այն գործիքներն են, որոնք օգտագործվում են որոշ երկրների իշխանությունների կողմից՝ փորձելով լռեցնել նաև, ովքեր առաջ են մղում կոռուպցիայի դեմ պայքարը: Կոչ եմ անում այդ իշխանություններին, ովքեր թաքնվում են տարբեր սահմանափակումներ մտցնող օրենքների ետևում, անմիջապես հետ կանգնել այդպիսի գործելաոճից և թույլ տալ քաղաքացիական հասարակության ավելի լայն մասնակցություն», - ասում է տիկին Մորեյրան:

Հունգարիան, որի ԿԸՅ արժեքը 2012թ. հավասար էր 55-ի իսկ 2017թ. այն նվազեց մինչև 45-ի, հանդիսանում է քաղաքացիական հասարակության սահմանափակման՝ Արևելյան Եվրոպայում ամենամտահոգիչ օրինակներից մեկը: Եթե Հունգարիայում ուժի մեջ մտնեն վերջերս մշակված օրենքների նախագծերը, ապա դրանք սպառնում են սահմանափակել հասարակական կազմակերպությունների ազատ գործելու հնարավորությունները և արգելել նրանց՝ ունենալ բարեգործական կազմակերպությունների կարգավիճակ: Դա ավերիչ հետևանքներ կունենա քաղաքացիական հասարակության բազմաթիվ

կազմակերպությունների համար, որոնք նախորդ օրենքի գործողության արդյունքում արդեն իսկ զգում են ազատ գործելու սահմանափակումները: Այդ օրենքը հանրության շրջանում առաջացնում է բացասական ընկալում այն հասարակական կազմակերպությունների նկատմամբ, որոնք ֆինանսավորվում են արտասահմանից:

Թրանսփարենսի Ինթերնեշնլի մասին

[Թրանսփարենսի Ինթերնեշնլը](#) կոռուպցիայի դեմ պայքարող քաղաքացիական հասարակության առաջատար համաշխարհային կազմակերպությունն է:

Կոռուպցիայի ընկալման համաթվի մասին

Սկսած 1995թ. իր առաջին հրապարակումից՝ Թրանսփարենսի Ինթերնեշնլի ամենանշանակալի հրապարակումը՝ [Կոռուպցիայի ընկալման համաթիվը](#), հանդիսանում է հանրային ոլորտում կոռուպցիայի համաշխարհային առաջատար ցուցիչը: Համաթիվը տալիս է կոռուպցիայի հարաբերական աստիճանի տարեկան պատկերը՝ դասակարգելով պետություններն ըստ համաթվի արժեքների: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելե՛ք www.transparency.org/research/cpi

Մեր վերջին վերլուծությունը, որն ուսումնասիրում է կոռուպցիայի և մամուլի, խոսքի և հավաքների ազատության միջև կապը, օգտագործում է Լրագրողների պաշտպանության կոմիտեի, Լրագրողներ առանց սահմանի, Ժողովրդավարության բավազանության ծրագրի և Համաշխարհային արդարադատության ծրագրի կողմից հավաքագրված տվյալները: Մենք երախտագիտությունն ենք հայտնում նշված կազմակերպություններին այդ տվյալները մեզ տրամադրելու համար: